ԻՏԱԼԻԱ

Իտալիա (իտալ.՝ Italia, պաշտոնապես Իտալիայի Հանրապետություն ունիտար խորհրդարանական հանրապետություն Եվրոպայում: Տեղակայված է Միջերկրական ծովի սրտում: Իտալիան ազատ ցամաքային սահմաններ ունի Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Սլովենիայի, Սան Մարինոյի և Վատիկանի հոտ: Իտալիայի տարածքը կազմում է 301.338 կմ քառակուսի (116,347 քառակուսի մղոն) և հիմնականում ունի հանգիստ սեզոնային և Միջերկրածովային կլիմա: Իր տեսքի պատճառով հաճախ այն անվանում են lo Stivale (կոշիկ): 61 միլիոն բնակչությամբ Իտալիան չորրորդ ամենախոշոր բնակչություն ունեցող երկիրն է Եվրոպական Միությունում:

Անտիկ ժամանակաշրջանում հին կարթագենացիները, փյունիկիացիները և հույները Իտալիայի հարավում հիմնել են բնակավայրեր, էտրուսկները և կելտերը բնակվել են Իտալիայի կենտրոնական հատվածում, իսկ հյուսիսում բնակեվել են հին իտալական տարբեր ցեղեր և ժողովուրդներ, որոնք հետագայում սփռվել են ողջ Ապենինյան թերակղզով մեկ: Իտալական ցեղերը հիմնել են Հռոմեական թագավորությունը, որը հետագայում դարձավ հանրապետություն և նվաճեց հարևան քաղաքակրթությունները: Հռոմը հետագայում հասավ իր հզորության գագաթնակետին և նվաճեց հին աշխարհի մեծ մասը: Նա դարձավ արևմտյան քաղաքակրթության մշակութային, քաղաքական և կրոնական առաջատար կենտրոնն աշխարհում:

Իտալիան «Մեծ ութնյակի» առաջատար պետություններից մեկն է: Իտալիան գտնվում է Հարավային Եվրոպայում, Միջերկրական ծովի կենտրոնական մասում, զբաղեցնում է Ապենինյան թերակղզին, Սիցիլիա, Սարդինիա և մի շարք մանր կղզիներ:

- Իտալիայի **քաղաքաաշխարհագրական դիրքն** ունի կարևոր առանձնահատկություններ: Գտնվելով Միջերկրական ծովի ավազանի կենտրոնական մասում՝ Իտալիան՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ, նշանակալի տեղ է գրավում ԱՄՆ-ի և այդ դաշինքի ռազմավարական պլաններում:
- Իտալիայի **տնտեսաաշխարհագրական դիրքի** կարևոր առանձնահատկությունը: Միջերկրական ծովի կենտրոնական մասում գտնվելն է (1200 կմ ձգվածությամբ հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք), որը դեռևս պատմական վաղ անցյալում խոշոր նշանակություն է ունեցել նրա զարգացման համար:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Արդյունաբերության զարգացման բնառեսուրսային բազան աղքատ է, հատկապես օգտակար հանածոների առումով: Իտալիային բնորոշ է վառելիքային ռեսուրսներով և սև մետաղների հանքաքարով թույլ ապահովվածությունը:

Իտալիան հարուստ է քիմիական հումքով՝ ծծմբով (Սիցիլիա կղզում), պիրիտներով, քարաղի և կալիումական աղերի պաշարներով: Համաշխարհային ճանաչում ունի իտալական սպիտակ մարմարը (Կարարեի հանքավայր), համարյա անսպառ են շինանյութերը:

Էներգետիկ կարևոր բազա են Ալպերի հզոր ջրաէներգառեսուրսները:
Գյուղատնտեսության զարգացման հողակլիմայական ռեսուրսներն ընդհանուր առմամբ բարենպաստ են, սակայն լեռնային մասնատված ռելիեֆը դժվարացնում է գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը:
Երկրի կենտրոնական և հարավային շրջանների կլիմայական պայմանները բարենպաստ են մերձարևադարձային (ձմռանը +4-ից մինչև +80 և խոնավ, ամռանը՝ +20-ից մինչև +280 և չոր), իսկ հյուսիսայինը՝ բարեխառն գոտու գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման համար: Իտալիան Եվրոպայի ընդարձակ ոռոգելի հողատարածություններ ունեցող երկրներից է

Բնական պայմանները տրանսպորտի զարգացման համար տարբեր են: Ցամաքային կապերի տեսակետից այն ընդհանուր առմամբ բարենպաստ է, սակայն Ալպերում և թերակղզու լայնական ուղղությամբ, որտեղ առկա է բարդ և մասնատված ռելիեֆ, դժվարանցանելի են:

Վիթխարի և բազմատեսակ են հանգստի և զբոսաշրջության ռեսուրսները: Զբոսաշրջության և հանգստի գլխավոր շրջաններն են՝ Ալպերը, Իտալական Ռիվիերան, Սիցիլիան, Լիպարյան կղզիները:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

- Իտալիան քաղաքակրթության հնամենի օջախ է, կազմում է արևմտյան (քրիստոնեական) քաղաքակրթության բաղկացուցիչ մասը: Այստեղ է ծագել, առաջացել ու զարգացել աշխարհակալ Հռոմեական կայսրությունը:
- Ազգային կազմի տեսակետից Իտալիան միատարր է, բնակչության 98 %-ը կազմում են իտալացիները (դավանանքով կաթոլիկներ) Ազգային կազմի տեսակետից Իտալիան միատարր է, բնակչության 98 %-ը կազմում են իտալացիները (դավանանքով կաթոլիկներ)
- Իտալացիների բնորոշ գծերից են տաքարյուն խառնվածքը, բարձր խոսելը, սերն ու հարգանքը դեպի արվեստի գործերը, ճանապարհորդելու մեծ ցանկությունը:

- Բնակչության բնական ցածր աճը նպաստում է ազգի ծերացման գործընթացին, որն ավելի է ուժեղանում
- Բնակչության խտությամբ (193 մարդ/քկմ) Իտալիան Եվրոպայում գրավում է հինգերորդ տեղը (Նիդերլանդներից, Բելգիայից, ԳԴՀ-ից և Մեծ Բրիտանիայից հետո):
- Իտալիայում ապրում են 3 հզ. հայեր, որոնք արհեստավորներ, վաճառականներ, հոգևորականներ, ուսանողներ, գիտության և մշակույթի գործիչներ են

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայումս Իտալիայի տնտեսությունը իր մեծությամբ երրորդն է Եվրոգոտում և ութերորդը՝ աշխարհում: Ազգային հարստության ցուցանիշներով Իտալիան յոթերորդն է աշխարհում, իսկ երկրի կենտրոնական բանկում ոստի պահուստների ցուցանիշներով՝ երրորդը աշխարհում: Իտալիան ունի մարդկային զարգացվածության բարձր աստիճան և կյանքի միջին տևառողության ցուցանիշներով վեցերորդն է աշխարհում: Երկիրը մեծ դեր ունի տարածաշրջանի տնտեսական, ռազմական, մշակութային, դիվանագիտական զարգացման գործընթացում: Իտալիան Եվրոպական միության հիմնադիր և առաջատար անդամներից մեկն է: Բացի այդ անդամակցում է միջազգային այնպիսի կազմակերպությունների աշխատանքներին, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՆԱՏՕ-ն, ՏՀԶԿ-ն, ԵԱՀԿ-ն, ԱՀԿ-ն,Միջերկրածովյան միությունը, Եվրոպայի Խորհուրդը և այլն: Որպես մշակութային կենտրոն, Իտալիայում են գտնվում Համաշխարհային ժառանգության 51 օբյեկտներ: Այս ցուցանիշով Իտալիան առաջինն է աշխարհում: Իտալիան հինգերորդ ամենաշատ զբոսաշրջիկներ ընդունող երկիրն է աշխարհում:

ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ

Հռոմ

Պիզա

Ֆլորենցիա

Վերոնա

Միլան

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

☺